

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱԶԱՄՕՂԱՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

**ԺԳ.00.02. «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

- | | |
|----------------------------|--|
| Գիտական ղեկավար՝ | Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Մ.Կարապետյան |
| Պաշտոնական ընդդիմախոսներ՝ | Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ.Աբրահամյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Մ.Ասատրյան |
| Առաջատար կազմակերպություն՝ | Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ |

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հուլիսի 7-ին ժամը 12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ հունիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ա.Հ. ՍՎԱԶՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Կրթության հիմնախնդիրների լուծման ժամանակակից առաջնահերթ ուղղությունը պետք է փնտրել ներկայումս առկա, գործնականում մատչելի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների կիրառման մեթոդաբանության մեջ: Այս մոտեցումները հիմնական դպրոցի աշխարհագրության դասավանդման գործընթացում պետք է ուղղվեն ուսուցման որակի բարձրացմանը և նպաստեն ապագայում սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը:

Այսօր հիմնական դպրոցի կրթական գործընթացի տեղեկատվայնացումը գերակա նշանակություն ունի կրթության արդի որակի, 21-րդ դարի աշակերտի տեղեկատվական մշակույթի և նրա գիտական աշխարհայացքի ձևավորման ու աշխարհաճանաչողության համար: Այստեղից էլ ուրվագծվում են ՏՀՏ-ների կիրառման նպատակները:

Մեր հետազոտության արդիականությունը թելադրված է ուսուցման ժամանակակից մեթոդների արմատավորման ճանապարհին, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ պայմանավորված, ուսուցման բոլոր բաղադրիչների վերանայման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրելով և գնահատելով աշխարհագրության դասավանդման գործընթացում արդի զարգացումները՝ փաստենք, որ հանրակրթության ոլորտում առկա են մի շարք հակասություններ՝

- սովորողների կողմից աշխարհագրական գիտելիքներ ձեռք բերելու ձգտման և գոյություն ունեցող ավանդական մեթոդների դիդակտիկական հնարավորությունների միջև,
- աշխարհագրության ուսուցչի կողմից նորովի, փոխներգործուն և թվայնացված մատուցման անհրաժեշտության և մանկավարժական գինանցում առկա ավանդական մեթոդական համակարգի հնարավորությունների միջև:

Այսպիսով, հիմնական դպրոցի միջին օղակում աշխարհագրություն առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ՏՀՏ-ի կիրառման մեթոդական մոդելի մշակումը, որը ներառում է նոր մոտեցումներ, միջոցներ և հնարավորություններ, համարում ենք արդի ու հրատապ: Այս հակասությունների առկայությունը պայմանավորեցին մեր հետազոտության հիմնախնդրի ընտրությունը, ինչպես նաև նրա հետագա ուսումնասիրությանը նպաստող գիտատեսական և մեթոդաբանական նախադրյալների վերլուծության անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակն է մշակել, տեսականորեն հիմնավորել և մանկավարժական գիտափորձով բացահայտել հիմնական դպրոցում, ՏՀՏ-ի

կիրառմամբ աշխարհագրություն առարկայի ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցում աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացն է:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրություն առարկայի դասավանդման մեթոդական համակարգն է:

Հետազոտության վարկածը մեր այն ենթադրության մեջ է, որ ՏՀՏ-ների կիրառմամբ հիմնական դպրոցի միջին օղակում աշխարհագրություն առարկայի ուսուցման գործընթացի արդյունավետությունը կբարձրանա, եթե՝

- բացահայտվի և տեսականորեն հիմնավորվի տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը հիմնական դպրոցի աշխարհագրության դասընթացում,
- աշխարհագրության դասավանդման մշակված մեթոդական համակարգը համատատասխանի սովորողների տարիքային խմբին հասու ՏՀՏ-ների կիրառման մակարդակին,
- մեթոդիկայիով նախատեսված աշխարհագրության դասավանդման բոլոր բաղադրամասերը, մեթոդները, միջոցները և ձևերը բխեցվեն ուսուցման ՏՀՏ-ների դիդակտիկական հայեցակարգերից,
- ՏՀՏ-նրը ներառվեն աշխարհագրություն առարկայի դասավանդման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Բացահայտել և հիմնավորել ՏՀՏ-ի կիրառման մեթոդական համակարգի դերը աշխարհագրության ուսուցման գործընթացում մանկավարժական և մեթոդական տեսանկյունից:
2. Բացահայտել հիմնական դպրոցում, աշխարհագրության դասագործընթացում ՏՀՏ-ի կիրառման հիմնախնդրի տեսական ուսումնասիրվածության աստիճանն և դրանց գործնականում կիրառվող մակարդակը:
3. Փորձարարական եղանակով հիմնավորել ՏՀՏ-ների կիրառման մեթոդական մոդելի արդյունավետությունը հիմնական դպրոցի միջին օղակում աշխարհագրություն առարկայի ուսուցման գործընթացում:
4. Մշակել ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրության ուսուցման բովանդակության և մեթոդների կատարելագործման տեխնոլոգիական երաշխիքներ և հանձնարարականներ:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տեսական և գործնական մանկավարժության ոլորտներում շրջանառվող Յու.Կ.Բաբանսկու, Մ.Վ.Կլարինի, Ի.Պ.Պոլյասիի, Պ.Ի.Պիդկասիստիի, Գ.Ա. Բորդովկիի, Ե.Զ.Վլասովայի, Ա.Պ.Երշովի, Ի.Ա.Կուվարդինայի, Վ.Վ. Լապտևի, Ե.Ի.Մաշբիցի, Ի.Ա.Ռոմյանցևի, Վ.Պ.Սոլովինի, Մ.Գ.Աստվածատրյանի,

Մ.Ա.Մկրտչյանի, Լ.Թ.Ասատրյանի, Ա.Մ. Մանուկյանի ավանդական և նորարարական տեխնոլոգիական մոտեցումները:

Մեթոդական մակարդակում՝ Ե.Ե.Վյազեմսկու, Վ.Վ.Գուզենի, Վ.Մ.Կուզնեցովի, Բ.Ֆ.Սկիպների, Ն.Ա. Կրաուդերի, Ա.Ա. Կավիրյալզի, Ա.Վ.Բատարշևի, Ի.Վ.Լևչենկոյի, Դ.Վ.Նովենկոյի, Լ.Ա.Վալեսյանի, Ա.Ա. Ախայանի, Մ.Գ. Աստվածատրյանի դասավանդման տեխնոլոգիաների դասական և ժամանակակից հայեցակարգերի մեթոդաբանական դրույթները:

Կրթության անձնակողմնորոշիչ մոտեցման գաղափարների դաշտում՝ Շ. Ամոնաշվիլու, Վ.Վ. Սերիկովի, Ի.Ս.Յակիմանսկայայի, Ի.Ա. Զիմնյայայի հիմնարար հետազոտությունները:

Մտածողության զարգացման, ուսումնական նյութի յուրացման հոգեբանական փուլերի վերաբերյալ՝ Ա.Լ.Ռուբինշտեյնի, Գ.Շ.Կաբանովա-Մելլերի, Լ.Ս.Վիգոտսկու, Պ.Ա. Մեպչինսկայայի, Վ.Պ.Զինչենկոյի, Լ.Մ.Ֆրիդմանի, Ա.Ա.Նալչաշյանի, Ա.Ա.Սեդրակյանի, Ս.Ս. Խուրոյանի հետազոտությունները:

Աշխարհագրության տեխնոլոգիաների	ուսուցման կիրառման	գործընթացում ասպարեզում	համակարգչային
Բ.Ս.Գերշունսկու, Ն.Ն.Պետրովայի, Ս.Պ.Գերասիմովայի, Մ.Բ.Վետլիցկու, Ի.Ի.Դրիգայի, Գ.Ի.Ռախի, Դ.Պ. Ֆինարովի,	Ի.Վ.Գրեբնյովի, Է.Վ.Ֆուֆայեվայի, Ի.Ի.Բարանովայի,	Լ.Ի.Չեմցովայի, Գ.Ս.Գոխբերգի, Ի.Ի.Բարանովայի,	Ն.Մ.Ռոզենբերգի, Գ.Ի.Դաջյուկի, Տ.Ֆ.Շչերբակովայի, Վ.Ն.Գոժիխի, Ա.Ի. Շեյնիսի և այլոց աշխատությունները:

Առաջադիր խնդիրների լուծման և վարկածների հաստատման համար կիրառել ենք **հետազոտական հետևյալ մեթոդները.**

- **Էմպիրիկ մեթոդներ՝**
 - դիտում, որի շնորհիվ կուտակել ենք տվյալներ ու փաստեր, որոնք հիմք են հանդիսացել դպրոցում աշխարհագրության դասավանդման մանկավարժական արդյունավետ պայմանների ստեղծման, ՏՀՏ-ի կիրառման փոխներգործուն մոդելների նախագծման և հանրակրթական միջին դպրոցում աշխարհագրության դասագործընթացում, դրանց արդյունավետության փորձարկման և նոր տեխնոլոգիաների մշակման համար,
 - անկետավորում և թեստավորում, որոնք հնարավորություն ընձեռեցին բացահայտել ուսուցման գործընթացին մասնակից յուրաքանչյուր սուբյեկտի տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները, անձնային և մասնագիտական որակները, դասագործընթացում ՏՀՏ-ների ներդրման և կիրառման

կարողությունները,

- գրույց, որը կիրառել ենք աշխարհագրության դասավանդման կատարելագործման մանկավարժական պայմանների բացահայտման նպատակով:
- **Տեսական հետազոտությունների և մանկավարժական առաջավոր փորձի վերլուծման և ընդհանրացման մեթոդներ**, որոնց օգնությամբ բացահայտել ենք տեխնոլոգիական տարբեր համակարգերի միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունն ու գործընթացի կատարելագործման մանկավարժական տեխնոլոգիաներ, ինչպես նաև ներկայումս համաշխարհային կրթական տարածքում շրջանառվող ծրագրային փաթեթներն ու էլեկտրոնային գրականությունը:
- **Մանկավարժական փորձարարություն, որը ներառել է՝**
 - **արձանագրող փորձարարություն**, որի նպատակն է ի հայտ բերել հանրակրթական հիմնական դպրոցի միջին օղակում աշխարհագրության դասավանդման որակի առկա մակարդակը, վեր հանել աշխարհագրական կրթության ոլորտում ակներև թերությունները, բացահայտել դրանց օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները:
 - **ձևավորող փորձարարություն**, որը ծառայեցվել է աշխարհագրության ուսուցման մեթոդաբանական հարցերի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների մշակման, ինչպես նաև մանկավարժական առավել նպաստավոր պայմանների հայտնաբերման նպատակին:
 - **հավաստող փորձարարություն**, որով ապահովվել է մեր թիրախային մոտեցման հավաստիությունը:

Հետազոտությունը իրականացվել են 3 փուլերով

Առաջին փուլ (2013-2014թթ.) ուսումնասիրվել ու տեսական վերլուծության է ենթարկվել հետազոտության հիմնահարցի վերաբերյալ փիլիսոփայական, աշխարհագրական, հոգեբանամանկավարժական գրականությունը: Մշակվել է հետազոտության գիտական ապարատը, ուսումնասիրվել է հիմնահարցի մշակվածության աստիճանը: Այս փուլն առնչվել է առաջադիր հիմնախնդրի տեսական հիմնավորման, նրա արդի վիճակի գնահատման հետ. տվյալ ժամանակահատվածում բացահայտվել են աշխարհագրության ուսուցման վերաբերյալ գիտական դիրքորոշումները, մոտեցումներն ու հայեցակարգերը:

Երկրորդ փուլում (2014-2015թթ.) ուսումնասիրվել են աշխարհագրության ուսուցման կազմակերպման տեսությունը և պրակտիկան ՀՀ-ում, որոշակիացվել է մեր դիրքորոշումը առաջադիր խնդիրների, պայմանների, հասկացությունների նորովի գնահատման և արժևորման բնագավառում: Այս փուլում մենք պարզաբանեցինք հետևյալ հարցերը՝

- ինչ պայմաններում և ինչ պատճառների հետևանքով է վերջին տասնամյակում օրախնդիր դարձել սովորողների աշխարհագրական կրթության իրացման մեթոդների և տեխնոլոգիաների վերանայման անհրաժեշտությունը,
- ինչքանով է կարևորվել սովորողների աշխարհագրական գիտելիքների և դրանց ձեռքբերման գործընթացում ՏՀՏ-ների դերը,
- որո՞նք են հիմնական դպրոցում սովորողների աշխարհագրական կրթության արդյունավետ կազմակերպման մանկավարժական, տեխնիկական, տեխնոլոգիական և մեթոդական արդի հրամայականները:

Երրորդ փուլում (2015-2016թթ.) մեր հետազոտությունը միտվել է ՏՀՏ-ների ներդրմամբ միջին դպրոցականների աշխարհագրության ուսուցման առանձնատեսակությունների ուսումնասիրմանը, կատարվել են փորձնական-փորձարարական հետազոտություններ: Անկետային հարցումների, դիտումների, զրույցի մեթոդներով ուսումնասիրվել են հանրակրթական դպրոցների միջին դասարաններում աշխարհագրական առարկաների դասավանդման դիդակտիկական սկզբունքները, որոշվել է դպրոցականների աշխարհագրական գիտելիքների ձևավորվածության մակարդակը, ի հայտ են բերվել 6-9-րդ դասարաններում դասավանդվող աշխարհագրություն առարկայի ծրագրային բովանդակության մեջ, ինչպես նաև ուսուցման նոր, ՏՀՏ-ի համակարգերում առկա կարծրատիպային թերությունները: Մշակվել են հանձարարականներ ուսուցիչների համար, շարադրվել է ատենախոսության բովանդակությունն ու հստակեցվել կառուցվածքը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ.

- Մշակվել և ներդրվել է ուսուցման գործընթացում ՏՀՏ-ների կիրառմամբ հիմնական դպրոցի միջին օղակում աշխարհագրության դասավանդման մեթոդական ժամանակակից համակարգ, որն իր մեջ ներառում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման երաշխիքներ և փոխներգործուն մեթոդներ:
- ՏՀՏ-ների կիրառմամբ հանրակրթական միջին դպրոցում աշխարհագրություն առարկայի դասավանդումը դիտարկվել է որպես տեղեկատվայնացման, թվայնացման և հաղորդակցական մեթոդների, միջոցների և ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու ձևերի ինքնատիպ տեխնոլոգիական կառույց:
- Սահմանվել են մանկավարժական տեխնոլոգիական այն պայմանները, որոնց կիրառմամբ արդյունավետ է դառնում աշխարհագրություն առարկայի դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների կիրառումը:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ նորովի

մոտեցումներով, ուսումնական հնարների ու կարողությունների նոր համակարգային լուծումներով, փոխներգործուն տեխնոլոգիաների վրա հիմնված դասագործընթացի մոդելավորմամբ, դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման արդյունավետ ուղիների բացահայտմամբ: Հետազոտության տեսական հայեցակարգը, որը ներառում է՝ հիմնական դպրոցի միջին օղակում աշխարհագրության ուսուցման սկզբունքները՝ հիմնված համակարգային, անձնակենտրոն մոտեցումների վրա, տեղեկատվության տրամադրման որոշակի մեթոդական մոդելը, ՏՀՏ-ների կիրառման կանոնակարգված մոտեցումներ, նոր ժամանակակից էլեկտրոնային գրականության ու գրադարանների կիրառման եղանակներ ու դասի նպատակից բխեցված տեղեկատվություն ընտրելու տեխնիկա, կարող է հիմք հանդիսանալ հանրակրթական միջին դպրոցների աշխարհագրության ուսուցիչների վերապատրաստման և նրանց մեթոդական պատրաստության կատարելագործման համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ.

- մեր կողմից մշակված և փորձարկված մեթոդական համակարգը, գիտամեթոդական երաշխիքները և տեխնոլոգիական հանձնարարականները կարող են նպաստել հանրակրթական միջին դպրոցում աշխարհագրության դասավանդման գործընթացի արդիականացմանն ու նորացմանը:
- Կատարված աշխատանքը հնարավորություն է ընձեռում իրականացնելու դասագործընթացի տեղեկատվայինացման և տեխնոլոգիականացման նպատակաուղղված գործընթացը ու նպաստում է այդ գործընթացի սուբյեկտների հաղորդակցական մշակույթի ձևավորմանը:
- Այն համալրում և հարստացնում է աշխարհագրության ուսուցիչների գործառույթները սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Հանրակրթական դպրոցի միջին օղակում աշխարհագրության՝ ՏՀՏ-ների կիրառմամբ դասավանդման մեթոդական ժամանակակից համակարգը:

2. Մանկավարժական տեխնոլոգիական պայմանների համակարգը, որը ներառում է.

- դասագործընթացի կառուցարկման տրամաբանությունը,
- գիտելիքների հաղորդման տարաբնույթ մեթոդների համադրումը,
- ՏՀՏ-ների կիրառման և դասական-հիմնարար դիդակտիկական սկզբունքների հաշվառումը,
- ՏՀՏ-ների և ժամանակակից մանկավարժական այլ տեխնոլոգիաների միաժամանակյա կիրառման տեխնիկայի կիրառումը,

- ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրական գիտելիքների յուրացման արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:

3. Հանրակրթական դպրոցում աշխարհագրության դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը նպաստում է ոչ միայն սովորողների գիտելիքների յուրացմանը, այլ նաև նրանց տեղեկատվական և հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու տեխնոլոգիական հմտությունների ձևավորմանը՝ ապահովելով աշխարհագրության ուսուցման արդյունավետությունը:

4. Հանրակրթական միջին դպրոցում աշխարհագրության դասավանդման գործընթացում ուսուցման փոխներգործուն մեթոդների և մասնավորապես ՏՀՏ-ների կիրառումը, դասագործընթացին մասնակից յուրաքանչյուր աշակերտի գործընթացի օբյեկտից կվերածի այդ գործընթացի լիիրավ սուբյեկտի:

5. Ուսուցման գործընթացում ՏՀՏ-ների կիրառումը ապահովում է գիտելիքների փոխանցման կանոնակարգված ընթացքը, խթանում սովորողների որոնողական և ճանաչողական ակտիվությունը, զարգացնում նրանց տեխնիկական, ստեղծագործական, տրամաբանական և քննադատական մտածողությունը և ձևավորում հաղորդակցման հմտություններ:

6. ՏՀՏ-ների կիրառմամբ կազմակերպված դասագործընթացը վկայում է աշխարհագրության ուսուցչի տեխնոլոգիական կոմպետենտության և նրա մանկավարժական մասնագիտական կոմպետենտության մասին:

7. ՏՀՏ-ների ներդրումն ու կիրառումը դասագործընթացի տարբեր փուլերում նպաստում է գործընթացին մասնակից սուբյեկտների համակարգչային գիտելիքների և ծրագրերի իմացությանն ու դրանցից օգտվելու կարողությունների ձևավորմանը:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված է աշխատանքի գիտական ապարատով և մեթոդաբանությամբ, հանրակրթական դպրոցներում ուսուցման և դաստիարակության հանրահայտ փորձի և համակողմանի վերլուծությունների արդյունքով, փորձարարական աշխատանքների ընթացքում փորձարկվող 6-9-րդ դասարաններում սովորողների, դասավանդող ուսուցիչների ներգրավվածությամբ, գիտափորձի տևական բնույթով և առենախոսի անձնական մասնակցությամբ ու ներդրումով:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, Երևանի Մ. Նալբանդյանի անվ. թիվ 33, Վ.Թեքեյանի անվ. թիվ 92 հիմնական դպրոցներում, Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի միջնակարգ դպրոցում և Արթիկ քաղաքի թիվ 7 ավագ դպրոցում: Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հետազոտողի կողմից հրատարակված վեց հոդվածներում, ներկայացվել են գիտագործնական գիտաժողովներին և մեթոդական սեմինարներին:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան ենթագլուխներով և եզրահանգումներով երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված և ուսումնասիրված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 171 էջից (առանց հավելվածի), պարունակում է 20 աղյուսակ, 1 գծապատկեր, 2 մոդել, 3 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Աշխարհագրության դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացման անհրաժեշտության տեսական և մեթոդաբանական հիմնավորումը» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Աշխարհագրական կրթության բովանդակության բարեփոխումների անհրաժեշտությունը հանրակրթության ոլորտում», հիմնավորված են աշխարհագրություն առարկայի դասավանդման մեթոդական-տեխնոլոգիական կատարելագործման՝ մասնավորապես ՏՏՏ-ի ներդրման անհրաժեշտությունը և գործառույթները:

Ներկայացված են դպրոցի դասագործընթացում արմատավորող ՏՏՏ-ների կիրառման մոդելների կառուցվածքային բնութագրերը և մեր կողմից մշակված մոդելի կառուցվածքը:

Բնութագրված են ՏՏՏ-ները ըստ հատկանիշների, ըստ կիրառման ձևերի, ըստ առաջադրված խնդիրների լուծման կամ կառավարման ուղղվածություն, ըստ համակարգչային ծրագրային ապահովման, ըստ կրթական համակարգի պահանջների:

Բացահայտված և բնութագրված էր ՏՏՏ-ների կիրառմամբ ուսուցման կազմակերպման անցումային շրջանում ուսուցիչներին հանդիպող դժվարությունները:

Երկրորդ՝ «Աշխարհագրության դասավանդման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները և սկզբունքները» խորագիրը կրող ենթագլխում բնութագրված են աշխարհագրության դասին ներկայացվող հոգեբանական, մանկավարժական, մեթոդաբանական և մեթոդական ժամանակակից պահանջները:

Բացահայտված են աշխարհագրության դասավանդման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, որոնց հաշվառումը առավել արդյունավետ կդարձնի այդ գործընթացը:

Երրորդ ենթագլխում՝ «Աշխարհագրության ժամանակակից դասին ներկայացվող տեխնոլոգիական պահանջները», հատկապես բնութագրվել

են աշխարհագրության դասագործընթացին ներկայացվող տեխնոլոգիական պահանջները:

Դիտարկված են ՏՀՏ-ների մանկավարժական գործառույթները՝ կիրառման մանկավարժական նպատակները, ուղղությունները և մանկավարժական պայմանները:

Դասագործընթացում կարևորվում են նաև տեխնոլոգիական համակարգված միջոցները, որոնցից են ուսումնական էլեկտրոնային դասընթացները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները որպես աշխարհագրության դասագործընթացի տեխնոլոգիականացման միջոց»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդիկան աշխարհագրության դասավանդման գործընթացում»**, հիմնավորվում է, որ ուսուցչի և հանրակրթական հիմնական դպրոցի միջին օղակի սովորողի միջև հոգեբանական պատնեշի վերացման առավել արդյունավետ միջոցներ համարվում են նաև ՏՀՏ-ները, որոնց լայնածավալ կիրառումը դասագործընթացում ապահովում է ուսման նկատմամբ դրական դիրքորոշումը, խթանում է նրանց իմացական հետաքրքրությունն ու դրդում ակտիվ գործունեության, ձևավորում է հաղորդակցական մշակույթ և զարգացնում ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ լիարժեք կենսագործունեության և կենսունակության պահպանման կարողությունները:

Արդի տեխնոլոգիական հնարավորությունների բազմազանությունից, մեր ուսումնասիրությունների արդյունքում, աշխարհագրության առարկայի ուսուցման գործընթացում, արդյունավետ և իրատեսական ենք համարում ծրագրային, տեխնիկական միջոցների և մեթոդական համալիրի կիրառումը:

Բացահայտվել են էլեկտրոնային կրթական պաշարների կառուցվածքային բաղադրիչները՝ տեղեկատվության ստացման, գործնական աշխատանքի, սովորողների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի ստուգման:

Հիմնվելով վերոբերյալ բոլոր փաստարկների վրա, գտնում ենք, որ աշխարհագրության դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման ներկայացված մեր մեթոդիկան առանձնանում է նորարարական փոխներգործուն և ավանդական պահպանողական եղանակների խելամիտ և նպատակահարմար համադրմամբ:

Կատարված համեմատական և համադրական վերլուծության մեր տրամաբանական մտահանգումն այն է, որ աշխարհագրություն առարկայի դասավանդման արդյունավետությունը ՏՀՏ-ների կիրառմամբ կբարձրանա, եթե այն կազմակերպվի անձնակենտրոն, կոմպետենտային մոտեցումների հիման վրա:

Ներկայացված է աշխարհագրության դասավանդման գործընթացում ավանդական և ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների իրացման փուլերի համեմատական պատկերը:

Տրված է դպրոցական էլեկտրոնային դասագրքերի գործառույթների բնութագիրը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հաղորդակցական տեխնոլոգիաների և ուսուցման փոխներգործուն մեթոդների համադրումը որպես աշխարհագրական գիտելիքների յուրացման պայման», հիմնավորվել է աշխարհագրության դասընթացի նպատակն ու խնդիրները և աշխարհագրական գիտելիքների կրթադաստիարակչական նշանակությունը:

Ներկայացված է ՏՀՏ-ների և ուսուցման փոխներգործուն մեթոդների համադրման ու նրանց ուսուցման ժամանակակից այլ պատեհ տեխնոլոգիաների հետ զուգորդման մոդելը:

Հիմնավորվում է, որ **էլեկտրոնային գրատախտակի** կիրառումն ամբողջությամբ փոխակերպում է դասագործընթացի ընթացակարգը, որակն ու արդյունավետությունը, բնույթն ու բովանդակությունը, էյությունն ու կառուցվածքը:

Երրորդ ենթագլխում՝ «ՏՀՏ-ների ներդրման և արդյունավետ կիրառման դիդակտիկական սկզբունքները» բնութագրված և հիմնավորված են ՏՀՏ-ների ներդրման և արդյունավետ կիրառման սկզբունքները:

Մեր կողմից կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ աշխարհագրության դասագործընթացում առավելագույն արդյունք կարելի է ակնկալել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգված օգտագործման պայմաններում:

Ներկայացված է մեր կողմից մշակված

- ՏՀՏ-ների կիրառման արդյունավետության գնահատման չափանիշերի համակարգը,
- ուսուցչի կողմից դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառման արդյունավետության գնահատման համակարգը,
- կրթական հաստատության կողմից ՏՀՏ-ների կիրառման արդյունավետության գնահատման համակարգը:

Հետազոտության երրորդ՝ **«Աշխարհագրության դասավանդման արդյունավետությունը խթանող տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման փորձարարական հիմնավորումը»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «ՏՀՏ-ների միջոցով ուսումնական նյութի մատուցման մեթոդների արդյունավետության փորձարարական հիմնավորումը», ներկայացված են փորձարարական աշխատանքի խնդիրները,

դրանց իրականացման փուլերը և կիրառված մեթոդները, արդյունքների վերլուծության իրականացման սանդղակը և բանաձևերը, ներկայացված են գիտափորձի տվյալների աղյուսակները և տրամագրերը, որոնք լիովին և համոզիչ կերպով հաստատում են S<S-ների կիրառմամբ դասագործընթացում գիտելիքի յուրացման արդյունավետության բարձրացումը:

Աշակերտների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս այն դրական ներգործությունը, որ ունենում են S<S-ական միջոցներն ընդհանրապես և էլեկտրոնային գրատախտակները մասնավորապես, նրանց յուրացրած գիտելիքներն ամուր ու հաստատուն դարձնելու գործընթացում:

Առանձնացվել է փոխներգործուն գրատախտակների կիրառմամբ աշխարհագրության դասագործընթացում առավել արդյունավետ իրականացվող չորս գործառույթ՝

- տնային հանձնարարության ստուգում,
- աշխարհագրական խնդիրների լուծում,
- գրաֆիկների, պարզ քարտեզների և գծապատկերների կառուցարկում,
- տեքստային նյութի ու երկրաչափական պատկերների կազմում և մատուցում:

Երկրորդ ենթազխում՝ «Մանկավարժական գիտափորձի տվյալների մշակումն ու վերլուծությունը» բնութագրված է մեր հետազոտության գիտական նորույթ հանդիսացող, հիմնական դպրոցի միջին օղակում S<S-ների կիրառմամբ աշխարհագրության դասավանդման մոդելը, փորձարարական ընթացքը, դրանց իրականացման տեխնոլոգիական: 6-9-րդ դասարաններում սովորողների աշխարհագրական գիտելիքների յուրացման մակարդակը որոշելու նպատակով, մենք առաջնորդվել ենք հետևյալ չափանիշների պահպանման անհրաժեշտությամբ՝ **օբյեկտիվությունը, հուսալիությունը, ստուգությունը:**

Թեստավորմամբ իրականացրել ենք երկու գործառույթ՝ ստուգողական և հայտորոշիչ: Հայտորոշման միջոցով բացահայտել ենք տվյալ օբյեկտի առկա վիճակը բնութագրող չափման մեծությունները, գործոններն ու գնահատականը: Ստացված տվյալների հուսալիությունը ստուգվել է համընթացական-կրկնվող թեստավորման մեթոդով, երբ միևնույն սովորողներին առաջարկվում էր կրկնել թեստի կատարումը մի քանի դաս հետո կամ կատարել առաջադրանքի մի այլ տարբերակ՝ առաջինին համահունչ: Ձեռք բերված արդյունքները հաշվել ենք առանձին առանձին՝ հաջողրիվ որոշելով նրանց փոխադարձ կապը: Եթե արդյունքները համընկնում էին, ուրեմն կարելի էր վստահել տվյալ թեստի հուսալիությանը: Փորձարարական աշխատանքների ընթացքում, օգտվելով թեստերի հայտորոշիչ բնույթից և փոխներգործուն գրատախտակի վրա շտկող, ուղղիչ աշխատանքներ իրականացնելու տեխնոլոգիական հնարավորություններից, հնարավոր և իրատեսական դարձավ բոլոր


սովորողների աշխարհագրական, հենքային (բազային) գիտելիքների յուրացման բավարար մակարդակի գործնականում ապահովումը:

ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրական գիտելիքների յուրացման և սովորողների առաջադիմության մակարդակի բացահայտմանն ուղղված թեսթային ստուգման հանրագումարային արդյունքները ներկայացված են աղյուսակում և համապատասխան տրամագրերում (Աղյուսակ 1, տրամագիր 1,2,3):


Աղյուսակ 1
ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրական գիտելիքների յուրացման և սովորողների առաջադիմության մակարդակի բացահայտմանն ուղղված թեսթային ստուգման հանրագումարային արդյունքները

	Դասարաններ									
	6 միայն 4-րդ թեսթի արդյունքները		7		8		9		գումարայինը	
	Սուգ.	Փրձ.	Սուգ.	Փրձ.	Սուգ.	Փրձ.	Սուգ.	Փրձ.	Սուգ.	Փրձ.
Սովորողների թվաքանակը										
Ընդհամենը մասնակիվել են /Ը/	80	80	80	80	80	80	80	80		
Դրական շեմը Չեն հաղթահարել / 10միավոր/ /Ե /	25	12	28	19	32	16	28	17		
Միջինից բարձր /17 միավոր/ /Ամբ /	18	24	21	21	19	22	21	24		
Անսխալ պատասխան /20 միավոր/ /Աբ/	13	31	18	20	21	22	18	22		
Առաջադիմությունը /Ա/%	68	85	65	76	60	80	65	78	64	79.75
Գիտելիքի յուրացման արդ. /որակը/ Գիտ /%	38	68	48	51	50	55	48	57	46	57.77


Աղյուսակի արդյունքները առավել արտահայտիչ արտացոլված են թիվ 1,2,3 տրամագրերում:



Տրամագիր 1
Սովորողների առաջադիմությունն ըստ թեսթային ստուգման հանրագումարային արդյունքների /%/



Տրամագիր 2
Սովորողների աշխարհագրական գիտելիքների յուրացման արդյունավետությունն ըստ փորձարարության թեսթային ստուգման հանրագումարային արդյունքների /%/



Տրամագիր 3
ՏՀՏ-ների կիրառմամբ սովորողների աշխարհագրական գիտելիքների յուրացման և առաջադիմության հարաբերակցությունը ավանդական և փորձարարական դասարաններում /%/

Այսպիսով փորձարարական աշխատանքները ցույց տվեցին, որ ՏՀՏ-ների կիրառումն հիմնական դպրոցի միջին օղակում ուսուցչին տալիս է դասագործընթացը ծրագրավորելու լայն հնարավորություններ, որոնք օգտագործելով, նա ի զորու է խթանել սովորողների հետաքրքրությունը, ակտիվացնել նրանց իմացական գործունեությունը, խթանել աշխարհագրական երևույթների, հասկացությունների, եզրույթների և այլ կարեվոր առարկայական բաղադրիչների ճանաչման գործընթացն ու զգալիորեն բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունն, ինչն էլ իր հերթին մեծապես նպաստում է գիտելիքների յուրացման, առարկայական-մասնագիտական կարողությունների, տեղեկատվական պաշարների օգտագործման հմտությունների զարգացման արդյունավետության բարձրացմանը կենդանի և անկենդան բնության հանդեպ սովորողների դրական դիրքորոշման ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Հետազոտությամբ ստացված արդյունքները հավաստեցին մեր կողմից առաջարկված գիտական վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ **եզրակացությունները**.

1. Աշխարհագրական կրթությունը պետք է դիտարկել որպես անհատի գիտական աշխարհայացքի ձևավորման գլխավոր գործոն: Աշխարհագրությունը հայեցակարգային մոտեցումների և աշխարհագրագետների վերլուծությունների արդյունքն է, որը բացարձակ չէ և բաց է քննարկման համար: Մեթոդաբանական մոտեցումների ու տեսությունների վերլուծությունը մեզ թույլ տվեց եզրակացնելու աշխարհագրության բովանդակության ուսումնասիրությունը, որը նպաստում է ՏՀՏ-ների լայնածավալ կիրառմամբ սովորողների շրջապատող աշխարհի բացահայտման և ընկալման կարողությունների ձևավորմանը:
2. Աշխարհագրական կրթության գլխավոր խնդիրն է ձևավորել սովորողների աշխարհագրական մտածողությունը, որը հնարավորություն կտա տեսնել և արձանագրել մարդու և հասարակության զարգացման ընթացքն ու արդյունքը տարածության ու ժամանակի մեջ: Դրա համար աշակերտը պետք է ձեռք բերի՝
 - տեխնոլոգիական միջոցների օգտագործման հմտություններ,
 - տեղեկատվական վիթխարհի հոսքերում կողմնորոշվելու կարողություն,
 - հաղորդակցական մշակույթ:
3. Ներկայումս մեր հանրապետությունում աշխարհագրության՝ որպես հենքային առարկայի, դասավանդումը պետք է իրականացնել կոմպետենտային, մշակութաբանական, տեխնոլոգիական մոտեցումների հիման վրա՝ շեշտադրելով միջմշակութային կապերը և տարբեր մշակույթների փոխներգործությունն, ինչն այսօր հնարավոր է ապահովել դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառմամբ:

Այս տեսլականով պայմանավորված՝

4. Հստակեցվել են աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ՏՀՏ-ների կիրառման տեսական և մեթոդաբանական հիմքերը: Բացահայտվել է, որ աշխարհագրության դասագործընթացում ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը հնարավորություն է ընձեռում լուծելու մանկավարժական այնպիսի խնդիրներ, որոնք ուղված են ոչ միայն դեռահասների առարկայական գիտելիքների արդյունավետ յուրացմանը, այլ նաև նրանց տեղեկատվական և հաղորդակցական մշակույթի ձևավորմանն ու գիտական հասկացությունների միջև տրամաբանական կապերի վերհանման կարողությունների զարգացմանը:

5. Մշակվել, ներդրվել և գիտափորձով հիմնավորվել է հիմնական դպրոցի 6-9-րդ դասարաններում ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրության ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մոդելը, որի նպատակն է, հետազոտվող օբյեկտների տարբերակման, ձեռք բերված գիտելիքների վերարտադրման և դրանք գործնականում կիրառելու կարողությունների ձևավորման միջոցով ապահովել սովորողների կողմից աշխարհագրության դասընթացի յուրացման արդյունավետությունն ու ուսումնասիրվող առարկայի կիրառական նշանակության գիտակցումը: Մշակված մոդելի ներդրման և իրացման արդյունքում իրենց տրամաբանական լուծումն են ստացել հետևյալ խնդիրները՝

- ստեղծվել են տեսական գիտելիքների արդյունավետ յուրացման մանկավարժական և տեխնոլոգիական նպաստավոր պայմաններ,
- դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառման անհատական, խմբային, թիմային և կոլեկտիվ ձևերի իրացման արդյունքում, ինչպես նաև, ուսուցման փոխներգործուն բնույթի առկայության պարագայում, զարգացել են սովորողների տեղեկատվական տեխնոլոգիական միջոցների օգտագործման և հաղորդակցական կարողությունները, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու մշակույթը:

6. Առանձնացվել են աշխարհագրության ուսուցման կազմակերպման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման մեթոդական արդյունավետ պայմանները՝

- դասագործընթացի կառուցարկման տրամաբանությունը,
- գիտելիքների հաղորդման տարաբնույթ մեթոդների համադրումը,
- տեղեկատվության փոխանցման և փոխանակման հստակ եղանակների ապահովում,
- ՏՀՏ-ների կիրառման և դասական-հիմնարար դիդակտիկական սկզբունքների հաշվառումը,
- ՏՀՏ-ների և ժամանակակից մանկավարժական այլ տեխնոլոգիաների միաժամանակյա և համահունչ կիրառման տեխնիկայի կիրառումը,

- ՏՀՏ-ների կիրառմամբ աշխարհագրական գիտելիքների յուրացման արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:
7. Դասակարգվել են աշխարհագրության ուսուցման ՏՀՏ-կան փոխներգործուն միջացները՝
- գիտական տեղեկատվության ձեռք բերման և գիտելիքների յուրացման փոխներգործուն միջոցներ,
 - տեսական գիտելիքների ամրապնդման, գործնական կարողությունների և կիրառական հմտությունների ձևավորման փոխներգործուն միջոցներ:
8. «Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացումը հանրակրթական դպրոցում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ» հիմնախնդրով ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների և իրացված մանկավարժական գիտափորձի արդյունքներով իրականացվեց աշխատանքի նպատակը, լուծվեցին առաջադիր խնդիրները, ապացուցվեց գիտական վարկածն ու հիմնավորվեցին պաշտպանության ներկայացված հայեցակարգային դրույթները:
- Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ **հրապարակումներում**.
1. Աջամոլյան Ա.Ա., Երկրատեղեկատվական համակարգերի դերը աշխարհագրական կրթության զարգացման գործընթացում, «Модернизация образования в контексте современных педагогических парадигм» միջազգային գիտական համաժողով, Երևան 2014թ., էջ 151-155
 2. Աջամոլյան Ա.Ա., Ինտերակտիվ գրատախտակների կիրառման արդյունավետությունը դասապրոցեսում (աշխարհագրության դասի օրինակով), «Բնագետ» հանդես, համահայկական IV գիտաժողով, Երևան 2014թ., էջ 154-155
 3. Աջամոլյան Ա.Ա., «Живая география» ուսուցման օժանդակ միջոցի ուսումնամանկավարժական առանձնահատկությունները, «Բնագետ» հանդես, համահայկական IV գիտաժողով, Երևան 2014թ., 153 էջ
 4. Աջամոլյան Ա.Ա., Թվային արբանյակային լուսանկարները և դրանց նշանակությունը դպրոցական աշխարհագրության դասապրոցեսում, «Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների ներկա վիճակը ՀՀ-ում և դրանց զարգացման հիմնական միտումները մոտ ապագայում», Երևան 2014թ., էջ 296-307
 5. Աջամոլյան Ա.Ա., Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացումը հանրակրթական դպրոցում՝ տեղեկատվական եվ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 1.2 (4), ԵՊՀ հիմնադրման 95-

ամյակին նվիրված հոբելյանական նստաշրջան, Երևան 2015թ., էջ 26-30

6. Աջամոյյան Ա.Ա., Информационные и коммуникационные технологии как средство повышения эффективности преподавания географии, «Молодой учёный» Научный журнал N12(92), Казань 2015г., с. 696-699
7. Աջամոյյան Ա.Ա., Համակարգչային ներկայացումների կառուցման մանկավարժական առանձնահատկությունները, «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր 6, Երևան 2015թ., էջ 47-53
8. Աջամոյյան Ա.Ա., Կարապետյան Գ.Մ., Սահացուցադրումների և համակարգչային ներկայացումների կիրառման արդյունավետությունը աշխարհագրության դասավանդման գործընթացում, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, N 1-2 (26), Երևան 2016թ., էջ 167-172
9. Ajamoghlyan A.A., Effectiveness of Information and Communication Technologies in the Teaching Process (by an Example of Geography Lesson), Journal of "Young scientist USA" Vol.5, Auburn, WA, USA, 2016, p. 11-13

АДЖАМОГЛЯН АРМЕН АШОТОВИЧ

ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ ГЕОГРАФИИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ С ИСПОЛЬЗОВАНИЕМ ИНФОРМАЦИОННЫХ И КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02- “Методика преподавания и воспитания” (география).

Защита диссертации состоится 7-го июля 2016г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Современные приоритетные направления решения проблем образования следует искать в методологии имеющихся доступных на практике информационных и коммуникационных технологий и применении технических средств. Эти подходы в средней школе должны быть направлены на улучшение качества образования и содействовать правильной профессиональной ориентации учащихся в будущем.

Сегодня информатизация образовательного процесса средней школы имеет важное значение для повышения качества современного образования, формирования информационной культуры, научного мировоззрения и мировосприятия ученика 21 века. Отсюда и вытекают формируются цели использования ИКТ.

Актуальность нашего исследования продиктована необходимостью пересмотра всех компонентов обучения, обусловленных внедрением информационных технологий и современных методов обучения.

Изучая и оценивая современные развития в процессе преподавания географии, отметим, что в общеобразовательной сфере выявляется ряд противоречий

- между стремлением учащихся получить географические знания и дидактическими возможностями существующих традиционных методов,
- между необходимостью интерактивного преподавания с использованием ИКТ со стороны учителя географии и возможностями традиционной методической системы, существующей в педагогическом арсенале.

Таким образом, в среднем звене средней школы разработка методической модели применения ИКТ для повышения эффективности преподавания предмета географии, которая включает в себя новые подходы, средства и возможности, актуальна. Эти противоречия обусловили выбор основной темы нашего исследования, а также необходимость анализа научных и методологических предпосылок.

Цель исследования разработать, теоретически обосновать и посредством опытного обучения выявить пути повышения эффективности обучения предмета географии с использованием ИКТ в средней школе.

Задачи исследования

1. Выявить и обосновать роль методической системы применения ИКТ в процессе обучения географии.

2. Выявить степень теоретической изученности проблемы применения ИКТ и уровень их практического применения в средней школе в процессе преподавания географии.

3. Методом опытной апробации обосновать, доказать и показать динамику повышения эффективности преподавания предмета географии в средней школе в результате внедрения методической модели применения ИКТ .

4. Разработать технологические гарантии и инструкции по усовершенствованию методов обучения географии с использованием ИКТ.

Научная новизна исследования

- Разработана и внедрена в процесс обучения экспериментируемых школ современная методическая система преподавания географии, которая включает информационные-коммуникационные технологии и интерактивные методы активизации деятельности учащихся.
- Преподавание предмета географии в общеобразовательной средней школе с использованием ИКТ рассматривается как технологическая система коммуникационных и цифровых методов, средств и форм эффективной организации учебного процесса,
- Определены педагогические условия, способствующие эффективному использованию ИКТ в процессе преподавания предмета географии.

Теоретическая значимость исследования обусловлена новыми подходами к методическим вопросам преподавания географии, новыми системными решениями способов и возможностей обучения, моделированием учебного процесса на основе интерактивных технологий, разработкой эффективных способов в процессе обучения с использованием ИКТ. Теоретическая концепция исследования, которая включает принципы обучения географии в среднем звене средней школы и основанной на системных, личностно-ориентированном подходе, методологическая модель предоставления информации, методы и техника использования выбора информации, исходя из цели урока, могут служить основой для переподготовки учителей географии общеобразовательных средних школ и для совершенствования их методической подготовки.

Практическая значимость исследования

- Разработанная методическая система, научно-методические рекомендации и технологические инструкции могут способствовать актуализации и модернизации процесса преподавания географии в общеобразовательной средней школе.
- Данное исследование предоставляет возможность реализовать процесс информатизации и технологизации обучения, способствуя формированию коммуникационной культуры субъектов этого процесса.
- Эта концепция дополнит и обогатит функции учителей географии в учебно-воспитательной работе с обучающимися.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, библиографии, использованной литературы. Объем диссертации составляет 171 страниц, содержит 20 таблиц, 1 рисунок, 2 модели, 3 диаграммы.

ARMEN ASHOT AJAMOGHLYAN

INCREASING EFFICIENCY IN TEACHING GEOGRAPHY THROUGH THE IMPLEMENTATION OF INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES AT PUBLIC SCHOOLS

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02-“Methods of Teaching and Education”(Geography).

The defence of the thesis will take place on July 7, 2016 at 12⁰⁰ at the session of the Specialized pedagogical committee 020 HAC for granting degrees at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University. Address: Tigran Mets 17, 0010 Yerevan)

SUMMARY

Relevance of the research Modern educational key issues can be solved by working out a methodology for the implementation of Information and Communication Technologies and other technical means in the teaching/learning process. These approaches held at public school Geography teaching process should mainly be directed to improve education quality and to encourage students with making right decisions in their future professional orientation.

Currently the provision of information for the educational process at public schools has major importance in the quality of modern education, as well as in the formation of information culture, scientific outlook and world recognition of the 21st century student. Hence the objectives for the implementation of ICT are outlined.

The relevance of our research is dictated by the need of ICT introduction in the teaching process with the help of which all the components of modern teaching methodology should be reviewed.

Studying and assessing current developments in public school geography teaching we should outline the following contradictions:

- between the pursuit of learners' geographical knowledge and existing didactic capabilities traditional methods,
- between the need of the provision of digital and interactive methods used by Geography teacher, and capabilities of traditional methods of the current pedagogical arsenal.

Thus, raising methodology of middle school Geography teaching efficiency through the implementation of ICT, which includes new approaches, resources and opportunities, are considered to be current and urgent.

These contradictions, as well as the need for further study and analysis of promoting scientific and methodological backgrounds became a reason of the selection of our study problem.

Aim of the research is to develop, theoretically substantiate and discover the ways of raising efficiency for teaching Geography through the implementation of ICT in practice.

Objectives of the research are:

1. To discover and substantiate the role of the implementation of methodical system of ICT in teaching Geography from the pedagogical and methodical point of view.

2. To explore the degree and practically implemented level of theoretical issue in the usage of ICT during the educational process of teaching Geography at public schools.
3. To substantiate, prove and demonstrate via the experimental methods the dynamics of increasing the efficiency of educating the subject of Geography at middle public schools (in accordance with curriculum intended for the grades from 6-9) as a result of investment of the methodical model for implementing the ICT.
4. To develop technological proposals for improving the concept and methods of teaching Geography through the implementation of ICT.

Scientific novelty of our research

- A methodological modern system, which involves information and communication technologies, learner-centered approach and interchangeable methods for motivating student, intended for teaching Geography through ICT at middle public schools has been developed and implemented in experimental schools.
- The implementation of ICT for teaching Geography at middle public schools has been considered as a technological system to organize the informational, digital and communication methods, means for arranging effective learning activity.

Theoretical value of the research is caused by the new approaches on several methodological tasks for teaching Geography, new virtual solutions for education and capabilities, modeling class activities based on interchangeable technologies, developing effective ways or the implementation of ICT in educational process. Theoretical concept of the research, which involves the principles of teaching Geography at middle public schools based on systematic, learner-centered approaches, some methodological models for the provision of information, regulated approaches for the implementation of ICT, methods for the implementation of new modern online literature for selecting information, it can be the basis for the training of Geography teachers at middle public schools and the for the improvement of methodological arrangement.

Practical significance of the research is that:

- The methodological system, which has been developed and tested by us, can contribute to innovation and modernization of teaching Geography at middle public schools.
- The work implemented provides an opportunity for informatization, digitalization the realization of intended for classroom activities and is to contribute communication culture between learners.
- It enriches the functions of Geography teachers while performing tutorial activities with students.

Content of the research The thesis consists of introduction, three chapters with their subchapters and conclusions, conclusion and bibliography. The body of the thesis is 171 computer pages, including 20 tables, 1 scheme, 2 models, 3 diagrams.